դապետն ի Սուրբ Նիկողոս եկաւ։ Երեկոյիս ի տեղն գնացաք։

Գշի օրս (1 Յունուարի) Թագաւորն պէրպէռպաշին իւրն սպանեց, պատճառելով թէ ի ժամանակ զօրպայիցն դու ևս խորհրդակից ես եղեալ։ Անցեալ շաբաթս հանեց զնա՝ զափուճիպաշի առնելով և օրս սպանեց, որ էր հայի որդի, որ անդ տարեալ զնա և բազում դանիւ տաճկացուցեալ եւ ի մօտ ժամանակս խիստ դահիճ եղև և բազում միտս ունէր առնել մեզ, և այժմ էառ զառհաւատչեայն աստ և անդ։

Յուլիս ամիս. և օրս եկեալ Ղայսէրցի մի քանի հայ առ Եղիազար վարդապետն թէ ի մեզանէ Գ ոգի գնացեալ են եղեալ հոռոմ և Հոռոմքն զնոսա մկրտեալ. զի՞նչ ասես մեզ, մեք զայն չեմք թողլոց, երթամք զնա տաճիկ առնեմք։ Եւ Վարդապետն ասաց թէ Դուք զհոռոմ լինիլն կու նեղանայք եւ ես զտաճիկ առնելն զնոսա ո՞րպէս կամիմ։ Եւ այսպէս նոքա ելեալ գնացին։

Եշի օրս (3 Յունուարի) Կիրակոս վարդապետն եկաւ, աշակերտ Եղիազար վարդապետին։

Ուրբաթ օրս (4 Յունուարի) Մաչատուր վարդապետն դատաստան արաւ վասն Նօխուտի տղին որ ի Կիրակիս ի գերեզմաններն կանանց խօսք է ասացեալ և զոմանս հայհոյեալ և բազում խայտառակութիւն, որ և տեսողքն եւ լսողքն գնացեալ Մարտիրոս վարդապետին պատմեալ. եւ նա արգելեալ զնա եկեղեցոյն եւ Մաչատուր վարդապետին թուղթ գրեցին թէ Դորա դատաստանն ա՛ռ. եւ օրս ի յԱստուածածին դատաստան արաւ, նզովեց եւ բանադրեց եւ զփիլոնն էառ առաջի ե եկեղեցոյ աթոռակալացն եւ իշխանացն։ Եւ յերեկեան օրն յամէն եկեղեցի թուղթ ուղարկեց թէ Եկէ՛ք եւ դատաստան կայ. եւ ամէնն եկին եւ մեր